ՀՏԴ : 281.6 + 37 + 72(479.25) + 93(=919.81)(450)
DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-231

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՏՔԸ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ. ՍԲ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏՈԼԵՆՏԱՑՈՒ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՀԱՅ ԼԵՎՈՆՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ ՀՌՈՄՈՒՄ XVI-XXI ԴԴ.

ԼՅՈՒՍԻՆ ՄԱՄՅԱՆ*

Հղման համար. Մամյան, Լյուսին: «Հայկական հետքը Իտալիայում. Սբ Նիկողայոս Տոլենտացու Հայ կաթողիկե եկեղեցին և Հայ Լևոնյան վարժարանը Հռոմում XVI-XXI դդ.»: *Արվեստագիտական հանդես,* N 1 (2022): 231-245. DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-231

Հոդվածը քննության է առնում XIX դարում հայ-իտալական պատմամշակութային սերտ կապերը՝ քողազերծելով այդ փոխառնչությունների մշակութային խորքային արմատները, նաև բացահայտում պատմական կարևոր նշանակության նյութական մշակույթի հուշարձանները, որոնք հիմնադրել կամ որոշակի պատմական շրջափուլում օգտագործել են հայերը Հռոմում՝ իրենց բազմադարյա ներկայության ու գործունեության շնորհիվ:

Առանցքային են Հռոմում հայկական ներկայության նյութական մշակույթի երկու հուշարձանների՝ Սբ Նիկողայոս Տոլենտացու եկեղեցու և հայկական քահանայապետական Լևոնյան վարժարանի ժամանակագրական և ճարտարապետական վերլուծությունը, ինչպես նաև մշակութային և հոգևոր միջավայրի ձևավորման ու գոյության պատմական ժամանակահատվածը ներկայացնելը: Նշյալ կառույցները վերլուծվել են փաստագրորեն՝ պատմական զարգացման համատեքստում, դիտարկվել են գործունեության ընթացքում ծագած դրանց բովանդակային փոփոխությունները, ճարտարապետական լուծումներն ու հորինվածքային առանձնահատկությունները: Ավելի քան կես դար ուսումնասիրության չարժանացած այս երկու հուշարձանի պատմական վերլուծության մեջ ներառված են սկզբնաղբյուրային նյութեր, այդ թվում՝ հստակորեն փաստագրող այն կարևորագույն պատմական իրադարձությունները, որոնք խթան են հանդիսացել հայ-իտալական հոգևոր ու մշակութային կապերի հետագա զարգացման համար:

Բանալի բառեր՝ հայկական հետք, Իտալիա, Հռոմ, Լևոնյան վարժարան, Սբ Նիկողայոս Տոլենտացու եկեղեցի, ճարտարապետություն, որմնանկարներ:

Ներածություն

Ինչպես հավաստում են պատմագրական աղբյուրները, հայերի ներկայությունն Իտալիայում հիշատակվում է դեռևս IV-VII դարերից, ուստի հայկական հետքերի որոնումների էքսկուրսներում հանդիպում ենք տարաբնույթ երևույթների, դեպքերի, նյութական մշակույթի արժեքների, այլ խոսքով՝ հայկական ներկայության վկայությունների, որոնք ձևավորվել են վաղ և ուշ միջնադարյան, ինչպես նաև պատմության նոր և նորագույն ժամանակաշրջաններում [1, էջ 198-204]: Վերոնշյալը փաստվում է հայ, հունահռոմեական պատմիչների աշխատություններով ու վավերագրերով, ինչպես նաև տարբեր դարերում ապրած հայ հոգևորականության հաղորդած տվյալներով, որոնք մաս են կազմում այս կամ այն քաղաքային ու եկեղեցական արխիվային ժառանգության: Այդ մասին են վկայում նաև կատարված հետազոտությունները, որոնց քառուղիներում բացահայտվել են բազում նյութական մշա-

* ՃՇՀԱՀ ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգնման և վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոնի դոցենտ, lusarx66@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ 20.01.2022, գրախոսելու օրը՝ 27.02.2022, տպագրության ընդունելու օրը՝ 20.05.2022:

կոյթի նմուշներ, մասնավորաբար եկեղեցիներ՝ սփռված ներկա Իտալիայի տարբեր նահանգներում, որոնք, անշուշտ, թվագրվում են տարբեր դարերով [2, էջ 211]:

Այսպիսով՝ հոդվածը նպատակամիտված է քողազերծելու հայ-իտալական պատմամշակութային կապերն ու փոխառնչությունների մշակութաբանական խորքային արմատները՝ մեր ընտրած երկու հուշարձանների կտրվածքով: Դա թերևս մի համառոտ անդրադարձ է այն հսկայածավալ հայկական պատմամշակութային ժառանգության, որը եղել է և կա Իտալիայում՝ ի դեմս հայկական ներկայության նյութական մշակույթի, այդ թվում՝ վերոնշյալ Սբ Նիկողայոս Տոլենտացու հայկական կաթողիկե եկեղեցու և հայկական քահանայապետական Լևոնյան վարժարանի: Դրանք տեղակայված են մայրաքաղաք Հռոմում և շուրջ մեկ ու կես դար ակտիվ գործում են շնորհիվ հայ կաթողիկե համայնքի ու հոգևորականության [3, էջ 212-215]:

Հայերը Հռոմում

Ըստ ավանդապատումի՝ առաջին հայը, որ այցելել է հավերժական քաղաք Հռոմ քրիստոնեության շրջանում, Սբ Գրիգոր Լուսավորիչն է: Հետագայում Հռոմը դառնում է հայ ուխտավորների ամենանախընտրելի և նվիրական վայրերից մեկը՝ Երուսաղեմից հետո [4, էջ 17-19]: Դեռևս VII դարի պատմագրությունը հիշատակում է, որ, *Tre Fontane* վայրին կից, Ներսես Պատրիկը կառուցել է մի մենաստան և մի եկեղեցի (*S. Andrea* և *Lucia de Renati),* որտեղ ծառայության են եկել բազմաթիվ հույն և հայ հոգևորականներ [3, էջ 211]: Ըստ պատմիչների՝ հայ հոգևորականների ներկայության մասին Ակվի-Սալվիում հիշատակվում է ընդհուպ XIV դարի սկիզբը [5, էջ 76-78]: Ցայսօր Տրապիստների վանքում պահպանվում են 1305 թվականին վերագրվող հայերեն արձանագրություններ [4, էջ 17]: Նշելի է, որ XIV դարի սկզբին Հռոմում եղել են «Հայոց» անունով երեք եկեղեցիներ՝ Santa Maria de Armenia, S. Jacomo de Armenia, (Ս. Հակոբ) և S. Gregorius Armeniorum (Ս. Գրիգոր Հայոց) [6, էջ 30]: Առաջին երկուսի տեղն ու դիրքը հայտնի չեն. ընդունված է նույնացնել նրանց երրորդի՝ Սբ Գրիգոր Հայոց եկեղեցու հետ, որը միաժամանակ հյուրատուն էր և գտնվում էր Սբ Պետրոսից մի քանի քայլ հեռավորության վրա [4, էջ 18]: Այս եկեղեցին 1562 թ. քանդվում է և դրա փոխարեն Տրաստվերե թաղամասում, Սբ Մարիա կամրջի մոտ, Պիոս V պապը հայերին տրամադրում է Սբ Լաուրենտիոս եկեղեցին (S. Lorenzo), որտեղ հաստատվում է նաև միաբանությունը [7, էջ 82]: Դժբախտաբար, երեք տարի անց հրեական գետտոյի ընդլայնման նպատակով այդ եկեղեցին ևս քանդվում է: Ստեղծված իրավիճակում Պիոս V պապը 1571 թ. Սբ *Մարիա Եգիպտացու եկեղեցին* շնորհում է գետտոյի կառուցման պատճառով իրենց հավաքատեղին կորցրած հայերին, որոնք այն տնօրինում են որպես ազգային եկեղեցի մինչև 1921 թ. [13, էջ 33]: Հարկ է նշել, որ վերջինս վերագրվում է հռոմեական կայսրությանը՝ *Fortuna virile* անվամբ (նկ. 1): Այն շրջապատված է եղել համեստ շինություններով, որոնք Հռոմ ժամանած հայ ուխտավորներին ծառայել են որպես հյուրատներ [8, էջ 612]: Գրիգորիո XIII պապի 1585 թ. հրամանագրով այս հյուրատներն ընդլայնվել ու կահավորվել են: Բա-

զում երևելի հայեր են այդ պատերի ներքո ապաստան ստացել, ապրել ու հյուրընկալվել [9, էջ 166]: Իր հերթին Կլեմենտոս XI պապը վերանորոգել և կահավորել է եկեղեցին ու հարակից հյուրատունը, որտեղ բնակվում էին Հռոմի սրբավայրերն այցելելու եկած հայ ուխտավորները:

1827-1830 թթ. հայ հոգևոր ու աշխարհիկ ուխտավորների, ինչպես նաև Օսմանյան կայսրությունից տեղահանված հայ կաթողիկների հոսքը դեպի Հռոմ մեծանում է, որի հետևանքով Սբ Մարիա Եգիպտացու հյուրատան հնարավորությունները չեն բավարարում: Հետևաբար, Լևոն XII և Պիոս VII պապերը որոշում են ավելի մեծ շինություն տրամադրել հայերին, որն իրականացնում է արդեն Գրիգորիո XVII պապը, որը 1832 թ. ներկայիս Սբ Վլասի եկեղեցին՝ (*Chiesa di San Biagio della Pagnotta*) իր հարակից շինություններով հանդերձ (հյուրատներ, բարձրաստիճան հոգևորականների նստավայրը), տրամադրում է հայերին [10, էջ 79] (նկ. 2): Իսկ Սբ Մարիա Եգիպտացի եկեղեցին, որպես հին Հռոմեական հուշարձան, վերածվում է թանգարանի արդեն Մուսոլինիի օրոք (1922-1943): Այստեղի ներքին կահավորանքների մեծ մասը, ինչպես նաև եկեղեցական արխիվը 1924 թ. փոխադրվում է Սբ Նիկողայոս Տոլենտացու նոր հայկական ազգային եկեղեցի [4, էջ 19]:

Ընդհանրապես Հռոմում հայերի անվան հետ են կապվում հիշատակության արժանի այլ հուշարձաններ ևս. Մխիթարյանները Սբ Ղազարի միաբանության հիմնադրումից ի վեր Հռոմում ունեցել են ուսանողական նստավայր ունենալու լիազորություն/թույլտվություն, իսկ *Anventino*-ի բարձունքի վրա՝ Սբ Անսելմո վանքին կից, իրենց բարձրագույն ուսումնական վարժարանը (նկ. 3): Հայտնի է, որ XVIII դարում հայ կաթողիկեների շրջանում մեծ տարածում է ստանում Անտոնյան հոգևորական վանական կարգը, և 1715 թ. Կլեմենտոս XIII պապի հովանու ներքո ստեղծվում է Անտոնեան միաբանությունը, որը մինչև 1871 թ. պատկառելի վանք ու նորընծայարան է ունեցել Սբ Պետրոսի հրապարակի մոտ՝ *Palazzo del S. Uffizio*-ի կողքին: Եվ վերջապես, Անարատ Հղության հայ մայրապետները, որոնք մի ժամանակ ապրում էին Սբ Վլասի հյուրատներում, 1923 թ. փոխադրվում են իրենց մայր-տուն՝ տեղակայված Հռոմի *Monte-Verde*՝ Կանաչ բլուր կոչվող թաղամասում [4, էջ 19] (նկ. 4):

Փաստորեն, միջնադարից ի վեր Հռոմի կենտրոնը հանդիսացել է հայերի համար զբաղվածության և գործունեության ծավալման հասու տարածք, իսկ Սբ Նիկողայոսի վանքն ու եկեղեցին եղել են Հռոմի կենտրոնական մասերի աշխույժ վերափոխվող տարածքներից՝ առանձնապես ուշագրավ հայկական հետքերով [11, էջ 3-5]: Այդ նկատառումով էլ այն ավելի մանրազնին հետազոտության առումով ուշագրավ է: Համալիրը կազմված է Սբ Նիկողայոս եկեղեցուց և քահանայապետական վարժարանից, որոնց անդրադառնում ենք ստորև:

Սբ Նիկողայոսի վանքն ու եկեղեցին

Սբ Նիկողայոս Տոլենտացին, որի անունով կոչվում է եկեղեցին, իտալացի սուրբ է և միստիկ. նրա պաշտամունքը մեծապես տարածված է իտալացիների շրջանում, հատկապես Ավգուստինյան եկեղեցիներում: Տոլենտացուն վերագրվում է

դժոխքում հոգիների պաշտպանությունը, իսկ նոյեմբերի 2-ը Սրբի նվիրյալ հետևորդների օրն է՝ Բոլոր Հոգիների Օրը, որն ամեն տարի նշվում է Իտալիայում [12]:

Սբ Նիկողայոս Տոլենտացու եկեղեցին 1599-1606 թթ. կառուցել են սանդալակիր Ավգուստինյանները: Տեղանքի ընտրությունը պատահական չէր: Նշելի հանգամանք է, որ դեռևս վաղ քրիստոնեական ժամանակաշրջանում Հռոմի այս տարածքում կառուցվել են առաջին տաճարներն ու եկեղեցիները, որին նպաստել են հարուստ բուսականության ու առողջ օդի առկայությունը, ինչպես նաև տեղաբնիկների ակտիվ ջանքերը:



ա) բ)

Նկ. 1. Սբ Մարիա Եգիպտացի եկեղեցի. ա), բ) ճակատներ

ա) բ)

Նկ. 2. Սբ Վլասի եկեղեցի. ա) ճակատ, բ) ներսում

Նկ. 3 . Հռոմի Մխիթարյան վանատունը

Նկ. 4. Հռոմի Սբ Հղության հայ կուսանաց մայր տունը

Անշուշտ, հարկ է նշել նաև, որ տարբեր դարերում, կապված օտար նվաճողների ներխուժումների (վեստգոթեր, վանդալներ. V դ.), բնակլիմայական համաղետների և այլ հանգամանքների հետ, Հռոմի՝ մեր կողմից քննվող քաղաքային հատվածում տուժել են մշակութային կոթողները, որոնք երբեմն հիմնովին ավերվել, թալանվել ու նույնիսկ լքվել են:

Հետագայում տեղանքը, որտեղ խոյացել են հիշատակված եկեղեցին ու վարժարանը, վերագտել է իր դերն ու նշանակությունը: XV դարի կեսերից քաղաքի այս հատվածը դիտարկվում է որպես դասական իդեալական լանդշաֆտ՝ քաղաքային միջավայրի կառուցապատման ու վերակենդանացման տեսանկյունից: Ինչպես հավաստում են Հռոմի քաղաքային արխիվից ստացված տվյալները, սույն ժամանակաշրջանից սկսյալ, շուրջ մեկդարյա կտրվածքով քաղաքն ընդլայնվում է դեպի արևելք, վերականգնվում են հնագույն պարիսպներն ու ջրատարները, վերսկսվում են պարտեզների և վիլաների գոտու վերափոխումները, և քաղաքաշինական փոխակերպումների շնորհիվ այստեղ հաստատվում են ազնվականությունը, իշխանական հայտնի ընտանիքները, ժամանակի հումանիստները, որոնք էլ և հետագայում խթանում են հումանիստական վերածննդի մշակութային վերելքը (ներկայիս *S. Carlo alle Quatro Fontane*-ի տարածքը): Այս ժամանակաշրջանին է հենց վերագրվում քաղաքի տարածքի բլուրների քաղաքաշինական ձևագոյացումը (նկ. 5):

Փաստացի այս տեղանքում է, որ Հռոմի պապ Ավգուստինո Մարիայի ջանքերով գնում են Սբ Նիկողայոս եկեղեցու հողատարածքը և մի հին կառույց, որը նորոգվում ու տրամադրվում է լատին միաբանության հայրերի տնօրինությանը: Վանքին կից կառուցվում է նաև փոքր եկեղեցի՝ երկու խորաններով, մեկը՝ նվիրված թագուհի Սբ Վարդարանին, մյուսը՝ Սբ Նիկողայոս Տոլենտացուն (նկ. 6): 1653 թ. իշխան Կամիլիո Պանֆիլին իր հերթին ընդլայնում, նորոգում է վանքը, նախաձեռնում եկեղեցու հարդարման գործընթացը. որպես գլխավոր և խորհրդանշական զարդ՝ տաճարի չորս անկյուններում պատկերում են Սբ պապի խորհրդանիշը՝ աղավնին՝ ձիթենու ճյուղով [4, էջ 50-52]:

Նկ. 5. Սբ Նիկողայոս եկեղեցին և վարժարանը



Նկ. 6. Սբ Նիկողայոս Տոլենտացու հին փողոցը, շենքը հիմնադրման շրջանի հատակագծում



ա) բ)

Նկ. 7. Սբ Նիկողայոս Տոլենտացու եկեղեցի. ա) ճակատը, բ) հատակագիծը

Նկ. 8. Սբ Նիկողայոս Տոլենտացու եկեղեցու ներսույթը **Նկ. 9.** Կարդինալ Հասունյանի դամբարանը



ա) բ) գ)

Նկ. 10. Սբ Նիկողայոս Տոլենտացու եկեղեցու վերականգնողական աշխատանքները
ա) պատերի ամրակայում, բ) խորանի վերականգնում, գ) գմբեթի վերանորոգում

Նկ. 11. Լևոնյան վարժարանի հին շենքը. ա), բ) ճակատները

Նկ. 12. Լևոնյան վարժարանի շենքի մուտքը



Նկ. 13. Վարժարանի մատուռի նախագիծ 1939-1943 թթ., հեղ.՝ Հ. Քասանջյան



Նկ. 14. Վարժարանի կառուցման ընթացքը 1941 թ.

Նկ. 15. Վարժարանի շենք 1950-ական թվ.

Նկ. 16. Նոր վարժարան. ա) բակը, բ) դահլիճը

ա) բ)

Նկ. 17. Լևոնյան վարժարանի շենքի հարկերի հատակագծեր. ա) նկուղի հատակագիծ, բ) տիպարային հարկ




Նկ. 18, 19. Վարժարանի բակը այսօր

Նկ. 20, 21. Վարժարանի պատերը զարդարող հայատառ հուշատախտակները

Ուշ միջնադարում՝ 1798 թ., Նապոլեոնի արշավանքի հետևանքով Սբ Նիկողայոսի վանքը նույնպես տուժում է, կողոպտվում, իսկ 1801 թ. լուծարվում է միաբանությունը: 1814 թ. վանքն ու եկեղեցին հանձնվում են Պադդիսդինի Անաղարտ Հղության կույսերին, որտեղ հաստատվում են մայրապետն ու քույրերը: Միաբանությունն ու եկեղեցին մնում են բատիստական միանձնուհիների տնօրինության ներքո մինչև Հռոմի Լևոն XIII պապի քահանայապետության ժամանակաշրջանը: Արդեն 1883 թ. նշյալ պապը, հիմնադրելով Քահանայապետական քոլեջը, անհատույց և անժամկետ օգտագործման նպատակով տրամադրում է այն Հայ կաթողիկե միաբաններին, որոնք 1920-ական թթ. այստեղ են տեղափոխվում Սբ Մարիա Եգիպտացու եկեղեցուց [13, էջ 5-10]:

Այսպիսով, Հռոմի Սբ Նիկողայոս Տոլենտացու եկեղեցին տեղակայված է ներկայիս Բարբերինի հրապարակի հարևանությամբ՝ համանուն փողոցի երկայնքով, և բարձր է հրապարակից մոտ 20 աստիճանով [14, էջ 17-59]: Ճարտարապետական ոճի առումով բարոկկո է: Հորինվածքով շինությունը խաչաձև է՝ 35 մ երկարությամբ և 25 մ լայնությամբ, գմբեթի բարձրությունը՝ 25 մ է, վերջինը 1-2 անգամ վերանորոգվել է (նկ. 7): Եկեղեցին կառուցված է տրավերտինից, տեսողականորեն բաժանվում է երկու հարկի, որոնք ճակատում միացված են անկյունային սյուներից բխող երկու եռանկյուն գոտիներով՝ բաժանված քիվերով և կոմպոզիտային կապիտելներով սյուներով: Ներքևի հատվածը ավելի լայն է, ընդգրկում է եկեղեցու ամբողջ լայնությունը, վերինը սահմանափակված է կենտրոնական նավի չափսերով: Ստորին հատվածում սյուները ճակատի մակերեսը բաժանում են երկու կողային բաժանմունքների, որոնց կենտրոնական խորշը զարդարում են Պամֆիլի ընտանիքի խորհրդանիշները՝ ձիթապտղի ճյուղն ու շուշանով աղավնին: Կիսակոր տիմպանն ավարտում է ճակատի պսակը, որի վերին կողային մասերում խոյանում են չորս ակրոթեր, իսկ կենտրոնում խաչն է:

Հատակագծի հեղինակն է նշանավոր Պիետռո դա Գորբոնան: Եկեղեցու ձախ հատվածում տեղակայված մուտքն ուղեկցում է դեպի Քահանայապետական հայկական վարժարանի բակ: Եկեղեցին ունի շքեղ ինտերիեր՝ պատերն ու առաստաղը հագեցած են գունագեղ որմնանկարներով, գերիշխում է մարմարի օգտագործումը (նկ. 8): Ներսույթը մի ուղղանկյունաձև երկարաձգված նավ է, որի երկու կենտրոնական մատուռներն առանձնանում են մարմարյա բազրիքով՝ ի տարբերություն մյուս կամարակապ մատուռների: Մարմարե պիլիաստեռները, որոնք զուգորդվում են կորնթական տիպի խոյակներով, բաժանում են մատուռների միջև տարածությունները, ծածկում պատերը և չորս հսկայական սյուները, անցուղու կողմերը, նախասրահի տարածքը և մուտքի դիմացի պատը: Իտալական մարմարի առատության և բազմազանության շնորհիվ կառույցը հիացնում է իր լուսավորությամբ և շքեղությամբ: Եկեղեցին ունի յոթ մատուռ և երեք խորան՝ հագեցած աստվածաշնչյան տեսարաններով, խորհրդանիշներով, գունագեղ նկարվածքներով: Եկեղեցու հարդարմանն ու ձևավորմանը մասնակցել են XVII դարի հռչակավոր իտալացի վարպետներ:

Աջակողմյան մատուռներից առաջինը նվիրված է Սբ Նիկողայոս հայրապետին, որտեղ խորանը զարդարված է Լաուրենցիայի նկարով, ինչպես նաև Բորգեզեի Աստվածամոր ծննդյան և թագադրությանը նվիրված պատկերապատումներով: Երկրորդ մատուռը նվիրված է Սբ Գրիգոր Լուսավորչին, որտեղ են նաև հայազգի կարդինալներ Անտոն Հասունյանի և Գրիգոր Պետրոս XV Աղաջանյանի դամբարանները՝ զետեղված պատի մեջ: Կարող ենք փաստել, որ նշյալ, միանգամայն հռոմեական ոճի լատին եկեղեցու հայկական ներկայության կարևոր վկայություններն են կարդինալների դամբարանները (նկ. 9): Այստեղ առկա չէ հայկական ճարտարապետության կամ արվեստի որևէ դրսևորում: Եկեղեցուց դեպի վարժարանի բակը տանող հատվածում տեղադրված է Լևոն XIII պապի կիսանդրին:

Առաջ անցնելով նշենք, որ երկրորդ մատուռը նվիրված է Սրբուհիներ Լուկրեցիային և Գերտրուդային, իսկ ձախ կողմում զետեղված է կարդինալ Ֆեդերիկոյի դամբարանը, որի ընտանիքի սեփականությունն է մատուռը: Խաչաթևի աջ խորանը նվիրված է Սբ Հովհաննես Մկրտչին: Նկարվածքի հեղինակն է նշանավոր Բաչիչին, քանդակագործը՝ Ֆերրադան: Ձախակողմյան մատուռներից առաջինը կրկնությունն է Երուսաղեմի Սբ Հարության պատկերապատումի: Երկրորդ մատուռը եկեղեցու ամենահարուստ մասն է, Գավոդդի ազնվատոհմի սեփականությունը: Իսկ երրորդում պատկերված է «Ավետումը»: Խաչաթևի ձախ խորանը ժամանակին նվիրված է եղել Սբ Ագնեսին, իսկ այսօր նվիրված է Երանելի Սբ Կոմիտասին (1929 թ.), որի հեղինակն է Բարբերիսին: Ներսում զետեղված Սբ Հովսեփի և Սբ Հովհաննես Մկրտչի արձանների հեղինակներն են Ֆերրադան և Բաչչին: Այստեղ են հիշյալ ընտանիքի դամբարանները՝ Ֆանչելլի հեղինակությամբ: Երրորդ ձախակողմյան մատուռը զարդարված է «Սբ Ընտանիքի» և «Ավետում» կտավներով:

Ձևակերտվածքով ուշագրավ է Ավագ խորանը, որի վրա աշխատել է Ալլեսանդրո Ալկարտին, նրա հետ մեկտեղ Ֆերրադան, որին պատկանում են Հայր Աստծո և Սբ Նիկողայոսի քանդակները, ինչպես և Գուիտինին, որն արարել է Աստվածամոր, Սբ Կոստինոսի, Սբ Մոնիկայի պատկերները, նաև Բարբադան, որին վերագրվում են հրեշտակների պատկերումները: Կարևոր է նշել, որ Ավագ խորանի ձախ կողմում ևս մի մատուռ կա, որը համարվում է եկեղեցու ամենահին մասը: Այն զարդարված է Բալդինիի որմնանկարներով, մարմարյա հրաշակերտ սյուներով և զարդանախշերով:

Եկեղեցու խոշոր և վեհաշուք գմբեթը հենված է չորս կամարների վրա, որոնք պարզորեն ընդգծում են տրանսեպտի հենման կետերը նավով և տրիբունայով: Թմբուկը մոդուլացված է ոսկեզօծ սվաղի շրջանակներով, որոնցում քառանկյուն վահանակներով ընդգծված է շուշանի մոտիվը: Գմբեթի հիմքում ընկած շարունակական ֆրիզի երկայնքով՝ նավերի լայնական և երկայնական առանցքների հատման հատվածում, պատկերված է խորհրդանշական աղավնին՝ ձիթենու ճյուղով: Գմբեթը զարդարող որմնապատկերում Սբ Նիկողայոսի փառաբանումն է ներկայացված՝ կատարված Ջ. Կոլլիի և Ֆ. Ջերարդիի կողմից, իսկ հրեշտակների հեղինակն է Բալդինին: 1884 թ. եկեղեցու գմբեթը վերակառուցվել է: 1950 թ. նորոգվել է եկեղեցու հատակը՝ ծածկվելով մարմարյա սալիկ-

ներով [4]: Ներկայումս եկեղեցու ներսույթն ամբողջովին վերանորոգման մեջ է և փաստորեն չի գործարկվում: Դատելով մեր ներկայացրած լուսանկարների շարքից՝ տեսանելի են ամրությունների առկայությունը ներսույթում, նաև առաստաղի տակի ցանցե շղարշը, որը միանգամայն անտեսանելի է դարձնում որմնապատկերները: Աշխատանքները դեռևս շարունակվում են (նկ. 10):

Հայկական քահանայապետական Լևոնյան վարժարան

Վերադառնալով քահանայապետական Լևոնյան վարժարանին, որն ըստ էության հայկական ներկայության հիմնական մասն է կազմում Հռոմի քաղաքային միջավայրի ու քննվող եկեղեցուն կից, նշենք, որ դպրոցի հիմնադրման գաղափարը ծագել է դեռևս XVII դարի վերջերին՝ Հռոմի Գրիգորիո XIII պապի կողմից: Այն վերազարթոնք է ապրում միայն իր մահից 2 դար անց՝ Հայ կաթողիկե եկեղեցու վերնախավի կողմից՝ Պիոս IX պապին ուղղված 1867 և 1870 թթ. երկու միջնորդագրերով: Սակայն վարժարանի հիմնադրումը կյանքի է կոչվում միայն Հռոմի Լևոն XIII պապի օրոք 1883 թ. հրամանագրով [4, էջ 25-47]:

Կարևոր ենք համարում ընդգծել, որ Լևոն XIII պապի քահանայապետության ժամանակաշրջանը համընկնում է համիդյան ջարդերի հետ, և ինչպես հավաստում են Վատիկանի գաղտնի արխիվներում պահվող փաստաթղթերը, Սուրբ քահանայապետը մեծապես մտահոգված է եղել Օսմանյան կայսրության տարածքում ապրող քրիստոնյաների ճակատագրով, որը փաստվում է պապի՝ սուլթանին հղած նամակի բովանդակությամբ: Փաստորեն, պապն անտարբեր չի եղել հայ քրիստոնյաների, մասնավորաբար կաթողիկե հայերի նկատմամբ, որի դրսևորումներից մեկն էլ քահանայապետական Լևոնյան վարժարանում հոգևորականությանը կրթվելու ու հաստատվելու հնարավորության ընձեռումն է (ըստ հայկական ծիսակարգի և հայկական եկեղեցու ավանդույթների)՝ այդպիսով խթանելով նրանց հետագա միսիոներական գործունեությունը քրիստոնեական համայնքներում: Սրբազան քահանայապետը ցանկանում էր, որ Լուսավորչի որդիները այստեղ կրթվեն Հայ եկեղեցու կարգով, ավելին՝ վարժարանում ծառայող լատին եկեղեցու ներկայացուցիչները նույնպես պետք է հետևեին Հայ եկեղեցու ավանդական կանոնակարգին: Պապը մեծ ուշադրություն է հատկացրել հայ կաթողիկե համայնքի, նաև վարժարանի հոգևոր զարգացմանն ու տնտեսական բարգավաճմանը: Ուստի, ի պատիվ իրեն, հայերը վարժարանն անվանակոչել են Լևոնյան (*Pontificio Collegio Armeno)*՝ շեշտադրելու իրենց երախտիքն առ Քահանայապետը [6, էջ 31]:

Վարժարանի շենքի ճարտարապետական մանրամասների ակնարկը ներկայացնելու համար համառոտակի նշենք, որ 1884 թ. կարդինալ Հասունյանը Սրբազան Քահանայապետին ներկայացնում է դպրոցի նոր հատակագիծը՝ հին ու նոր շենքերի մասերով [4, էջ 32-33]: Շինարարական բացառիկ փորձառություն ունեցող Հասունյանը վարժարանի շինարարության և շրջակայքի բարեկարգման գործընթացը կազմակերպում է արագ՝ պատրաստելով կառուցվող դպրոցի կանոնական և նյութական հիմքերը: Ի սկզբանե շենքը եռահարկ էր, քիվով առանձնացող առաջին հարկում՝ կամարակապ ընդարձակ լուսամուտ-

ներով (նկ. 11): Բակը բարեկարգված էր Հռոմին և ժամանակաշրջանին բնորոշ ավանդական մոտեցումներով, ներառյալ առատ և բազմազան բուսականությամբ, ջրավազանով, ճեմուղիներով: Վարժարանի շենքում ծառայող և ուսանող հայերի համար առօրյա հոգևոր արարողությունների համար նախատեսված էր մատուռ, մեծավորների և աշակերտաց սրահներ, նաև ճաշասրահ:

Երկրորդ աշխարհամարտից հետո Հայ կաթողիկե նվիրապետության կարևոր ձեռնարկներից մեկը եղավ վարժարանի նոր շենքի կառուցումը՝ ի հեճուկս Գերյ. Գրիգոր Ինճեյանի, որը, հաղթահարելով բազում դժվարություններ, հաջողությամբ ավարտին հասցրեց այն [4, էջ 150-15] (նկ. 13, 14, 15): Փաստորեն, 1943 թ. հունվարի 2-ին ուսանողների առջև բացվում են վարժարանի նոր շենքի դռները, որն ընդարձակ էր, հարմարավետ, կահավորված զուսպ շքեղությամբ (նկ. 12): Բացի դասասենյակներից, այն ուներ ընդունելությունների սրահ, դասախոսությունների դահլիճ, մատուռ, սեղանատուն, գրադարան, բարեկարգ ներքին բակ (նկ. 16):

Ներկայումս արդեն յոթհարկանի այդ շենքում գործում են գրադարան, ճաշարան, խոհանոց, երկու՝ Հոգևոր Տիրոջ մատուռը և ավելի մեծ ու ընդարձակ՝ Նարեկի Տիրամոր մատուռը, ինչպես նաև մի մեծ դահլիճ ու վեհարանը (նկ. 13): Շենքի 5-րդ հարկը տրամադրված է փիլիսոփայության, իսկ 6-ը՝ աստվածաբանության ֆակուլտետի ուսանողներին: Վարժարանում, որպես կարևոր արժեք, պահպանվում է կարդինալ Աղաջանյանի առանձնասենյակը՝ իր ամբողջ պատմական կահավորանքով և արտեֆակտերով: Առկա են մարզասրահ, ուսանողների և հյուրերի համար կեցության սենյակներ (նկ. 17): Բարենորոգումների շնորհիվ այսօր հանգստի և ժամանցի համար հարմարեցված է նաև վարժարանի շենքի կտուրը. վերևից կարելի է զմայլվել Հռոմի տեսարանով: Քաղաքի ամենակենտրոնական և բանուկ մասում գտնվող այս շենքը զարդարում է մայրաքաղաքը նախ և առաջ իր պատմական և գաղափարական նշանակությամբ (նկ. 18, 19): Անշուշտ, նշելի փաստ է, որ հայկական վարժարանում ուսանել և դասավանդել են բազմաթիվ հայ երևելի գործիչներ, հոգևորականներ, հայոց եկեղեցու և մշակույթի բացառիկ ռահվիրաներ, բարձրաստիճան հոգևոր այրեր (նկ. 20, 21):

Եզրակացություններ

1. Հռոմում հայկական հետքը, որը վերաբերում է եվրոպական նոր ու ավելի ուշ ժամանակաշրջաններին, միջմշակութային և հոգևոր դրսևորման փայլուն օրինակներից է: Ճարտարապետական առումով դրանք պաշտամունքային, քաղաքացիական, ուսումնական շենքեր ու համալիրներ են:

2. Միջնադարից ի վեր հայերի ներկայությունը Հռոմում նախադրյալներ է ստեղծել հայկական հոգևոր ու մշակութային միջավայրի ձևավորման ու գոյապահպանության պատմական ընթացքի համար՝ նպաստելով մշակութային ժառանգության կուտակմանն ու հայկական ակնհայտ հետքերի ձևագոյացմանը:

3. Ուսումնասիրելով Սբ Նիկողայոս Տոլենտացի եկեղեցու հատակագծային հորինվածքի և ճարտարապետական լուծումների առանձնահատկությունները՝ նկատելի են տարաբնույթ փոփոխություններ՝ հընթացս տարբեր ժամանակափուլե-

րի: Հայերին նվիրաբերվելուց ի վեր եկեղեցում «հայկականությանն» առնչվող միակ նյութական հետքը կարդինալներ Գ.Պ. Աղաջանյանի և Ա. Հասունյանի ներսույթում ամփոփված դամբարաններն են: Իբրև «հայկականություն»՝ այստեղ ամենուր իշխում է հայկական հետքի «կենդանի» ներկայությունը՝ ի դեմս հոգևոր մշակույթի:

4. Լևոնյան վարժարանի շենքի հատակագծային հորինվածքի ու ճարտարապետական լուծումների համատեքստում, ինչպես նաև արտաքին ու ներքին հարդարումներում ակնառու են ժամանակի ընթացքում կատարված վերափոխումներն ու բարենորոգությունները, որոնց շնորհիվ կառույցը ենթարկվել է հարմարավետ և լիարժեք շահագործմանն անհրաժեշտ փոփոխությունների: Գտնվելով Հռոմի ամենակենտրոնական և պատմականորեն կարևոր միջավայրում՝ շենքի արտաքին տեսքն ի սկզբանե և ժամանակի մեջ պահպանել է իտալական մայրաքաղաքային ճարտարապետության սկզբունքները: Այստեղ «հայկականության» նյութական հետքն առկա է ամենուր, այդ թվում՝ սենյակների մինիմալիստական ձևավորման, եկեղեցական պարագաների, կահավորանքի, միջանցքներն ու նախասրահները զարդարող քանդակների և նկարների մեջ, պատերին առկա հայատառ արձանագրություններում: Ինչպես եկեղեցու պարագայում, վարժարանում ևս գերիշխող է հայկական հետքի «կենդանի» ներկայությունը՝ ի դեմս կրթական, պատմամշակութային ու հոգևոր գործոնների և գործիչների առկայության:

Գրականություն

1. Maria Mirella De Martis. Gli Armeni nell՝Italia Medievale (VI-XV secolo), Roma - Armenia, biblioteca pontifica Vaticana, 1999, pp. 198-204.
2. Roma-Armenia, biblioteca pontifica Vaticana, 1999, p. 211.
3. Pavel Chobanian. Gli Armeni a Roma nel XIII secolo, Roma-Armenia, biblioteca pontifica Vaticana, 1999, pp. 211-215.
4. Հուշամատյան ՔՀՆՊ. Լևոնյան Հայ Վարժարանի 1883-1958, tipografia paliglotta Armena, San Lazzaro - Venezia, 1958.
5. Ալիշան Հ.Ղ., Սիսուան, Վենետիկ-Ս.Ղազար, 1885:
6. Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. երրորդ, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2013:
7. Ստեփաննոս Գիուվեր, Ագոնց, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, Վենետիկ, Ս. Ղազար, 1802:
8. M. Armellini, Le chiese di Roma dal secolo IVab XIX, Roma, 1891.
9. Կարապետյան Մ.Մ., Հռոմի գաղթօջախի պատմությունից, https:\\artsakhlib.am.>2020\07
10. Թովմա Վարդապետ Խաչատրյան, Իտալիայի պատմական Հայկական եկեղեցիները, Իտալիայի Հայ Սրբերը, նշանավոր հայերը, վարդապետական թեզ, անտիպ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2015:
11. Ակինեան Հ.Ն. Ցուցակ ձեռագրաց Ս. Վլաս հյուրանոցի և Լևոնյան Քահանայապետական հայ վարժարանի ի Հռոմ, Վիեննա, 1960:
12. Catholic Encyclopedia, St. Nicholas di Tolentino,1913, архивная копия от 16.01.13 г.
13. Boghos Levon Zekyan, coordinamento scientifico e redazione del catalogo GIli Armeni in Italia, de Luca edicioni d՝ arte, 1990.

14. Jiuliana Zandri, S. Nicola da Tolentino, istitutto nazionale di studi romani, Fratelli Palombi editori, 1987.

References

1. Hushamatyan QHNP. Levonyan Hay Varjharani 1883-1958, tipografia paliglotta Armena, San Lazzaro - Venezia, 1958.
2. Alishan H.Gh., Sisvan. Venetik - S. Ghazar, 1885.
3. Hay gaght'ashxarhi patmut'yun, h. errord, Erevan, HH GAA patmut'yan institut, 2013.
4. Step'annos Giuver, Agonc, Ashxarhagrut'un choric masanc ashxarhi, Venetik, S. Ghazar, 1802.
5. M. Armellini, Le chiese di Roma dal secolo IVab XIX, Roma, 1891.
6. Karapetyan M., Hr'omi gaght'o'jaxi patmut'yunic, https:\\artsakhlib.am.>2020\07
7. T'ovma Vardapet Xachatryan, Italiayi patmakan Haykakan ekeghecinery', Italiayi Hay Srbery', nshanavor hayery', vardapetakan t'ez, antip, Mayr At'or' S. E'jmiac'in, 2015.
8. Akinean H.N. Cucak d'er'agrac S. Vlas hyuranoci ev Levonyan Qahanayapetakan hay varjharani i Hr'om, Vienna, 1960.

АРМЯНСКИЙ СЛЕД В ИТАЛИИ: АРМЯНСКАЯ КАТОЛИЧЕСКАЯ ЦЕРКОВЬ СВ. НИКОЛАЯ ТОЛЕНТИЙСКОГО И АРМЯНСКИЙ КОЛЛЕДЖ ЛЕВОНЯН В РИМЕ В XVI-XXI ВВ.

ЛЮСИН МАМЯН*

Для цитирования: Мамян, Люсин. “Армянский след в Италии: Армянская католическая церковь Св. Николая Толентийского и Армянский колледж Левонян в Риме в XVI-XXI вв.”. *Искусствоведческий журнал,* N 1 (2022): 231-245. DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-231

В настоящей статье представлены тесные культурно-исторические связи армян с Италией в 19 в., выявлены глубокие культурные корни этих контактов. Рассматривается ряд важных по своему значению памятников материальной культуры, созданных и используемых армянами в результате их деятельности в Италии в период средневековья.

Объектом изучения являются два памятника материальной культуры – армянская католическая церковь Св. Николая Толентийского и армянский колледж Левонян. Их исследование проводится на основе критического и хронологического метода в контексте исторического развития, а также в плане их архитектурных решений и особенностей. Научно-исторический анализ этих двух памятников базируется на богатом источниковедческом материале, освещающем важнейшие исторические события, которые послужили толчком для дальнейшего развития конфессиональных и культурных контактов между Арменией и Италией.

* Доцент кафедры теории архитектуры, реставрации и реконструкции историко-архитектурного наследия, изящных искусств и истории НУАСА, lusarx66@gmail.com, статья представлена 20.01.2022, рецензирована 27.02.2022, принята к публикации 20.05.2022.

Ключевые слова: армянский след, Италия, Рим, колледж Левонян, церковь Св. Николая Толентийского, архитектура, фрески.

THE ARMENIAN TRACES IN ITALY: ARMENIAN CATHOLIC CHURCH OF ST. NICHOLAS OF TOLENTINO AND ARMENIAN LEVONIAN COLLEGE OF ROME IN THE 16TH-21ST CC.

LYUSIN MAMYAN*

For citation: Mamyan, Lyusin. "The Armenian Traces in Italy: Armenian Catholic Church of St. Nicholas of Tolentino and ARMENIAN Levonian College of Rome in the 16TH-21ST cc.", *Journal of Art Studies,* N 1 (2022): 231-245. DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-231

The given article presents the Armenian-Italian cultural and historical ties in the 19th century, the deep cultural roots of these interactions are revealed. A number of important monuments of material culture, created and used by the Armenians as a result of their activities in Italy during the Middle Ages, are considered.

The object of study are two monuments of material culture – the Armenian Catholic Church of St. Nicholas of Tolentino and the Levonian Armenian College. Their study is carried out on the basis of a critical and chronological method in the context of historical development, as well as in terms of their architectural solutions and features. The scientific-historical analysis of these two monuments is based on a rich sourceological material elucidating the most significant historical events that served as an impetus for the further development of confessional and cultural contacts between Armenia and Italy.

Key words: Armenian trace, Italy, Rome, Levonian College, St. Nicholas of Tolentino Church, architecture, frescoes.

* Associate Professor at the Chair of Theory of Architecture, Restoration and Reconstruction of Historical-Architectural Heritage, Fine Arts and History of the NUACA, lusarx66@gmail.com.
The article was submitted on 20.01.2022, reviewed on 27.02.2022, accepted for publication on 20.05.2022.